

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 20

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

06.08.2018թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Խաչատրյանը - մարզպետի տեղակալ
- Ա.Ղուկասյանը - մարզպետի տեղակալ
- Ս.Սարուխանյանը - մարզպետի տեղակալ
- Ն.Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ.Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Ա.Բեջանյանը, Վ.Ջաղիչյանը, Ա.Մանուչարյանը, Ա.Մատինյանը, Ա. Ջանազյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ս.Ղուբաթյանը, Ա. Եղիազարյանը, Ա.Գասպարյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Հ.Ղամբարյանը - մարզպետի խորհրդական
- Գ.Սաղաթեյանը -մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ`

1. Թումանյանի տարածաշրջան կատարած այցի մասին

Հրանտ Մարգարյան

2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների և ՏԿՁ նախարարությունում կայացած խորհրդակցության ընթացքում տրված հանձնարարականների մասին:

/Ձեկ. Ն.Սարգսյան/

3.Պետական գերատեսչությունների կողմից տրված հանձնարարականների մասին և նախորդ շաբաթվա ընթացքում կատարած աշխատանքների մասին:

/ Ձեկ. Ա.Խաչատրյան, Ա.Ղուկասյան, Ս.Սարուխանյան/

4. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին

/ Ձեկ. Ա.Բեջանյան/

5. Լոռու մարզի 2018թ. աշխատանքային գործունեության ծրագրի 1-ին կիսամյակի մոնիտորինգի մասին

/ Ձեկ. Հ.Մկրտչյան/

6.Գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքի մասին:

/ Ձեկ. Գ.Հակոբյան/

7. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Խաչատրյանին, Ա.Ղուկասյանին, Ս.Սարուխանյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանին և ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝

Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ և անհատական աշխատանքներ իրականացնել համայնքների ղեկավարների, ինչպես նաև 500 000-ից ավել հարկային պարտավորություններ ունեցող պարտավորություններ ունեցողների հետ:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Ղուկասյանին, Ա.Խաչատրյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝

Արջուտ համայնքի աղբավայրի շահագործման հետ կապված բնակչության դժգոհություններին վերաբերվող քննարկումները պահել ուշադրության կենտրոնում և վերահսկել փոխզիջումային լուծման տարբերակի ընդունումը:

07/08/2018

X 

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Արձ. Ս. Մակարյան

Հեռ. 0322 /4-32-99/